



RIO+20

United Nations Conference
on Sustainable Development

Ռիո + 20

Միավորված ազգերի կազմակերպության
Կայուն զարգացման համաժողով

Ռիո դե ժանեյրո, Բրազիլիա – 20-22 հունիս 2012

Ապագան, որ մենք ենք ուզում

www.uncsd2012.org

Ռիո+20-ը կդառնա մեր դարաշրջանի կայուն զարգացմանը նվիրված ամենակարևոր համաշխարհային հանդիպումներից մեկը: Ռիոյում մեր առջև դրված խնդիրը պետք է լինի հստակ - ստեղծել կայուն “կանաչ” տնտեսություն, որը կապահովի շրջակա միջավայրի պաշտպանությունը, միաժամանակ նպաստելով հազարամյակի զարգացման նպատակների իրականացմանը եկամուտների աճի, պատշաճ աշխատատեղերի ապահովման և աղքատության հաղթահարման միջոցով:

*ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար՝
Բան Կի-մուն*

Ի՞նչ է Ռիո+20-ը

Ռիո+20-ը ՄԱԿ-ի կայուն զարգացմանը նվիրված համաժողովի կրճատ անվանումն է, որը տեղի կունենա Բրազիլիայի մայրաքաղաք Ռիո դե ժանեյրոյում 2012 թվականի հունիսին: Այն պատմական մի հնարավորություն է ուղիներ գտնելու բոլորի համար ավելի ապահով, ավելի անաչառ, ավելի մաքուր, ավելի կանաչ ու բարգավաճ աշխարհի ստեղծելու համար: **1992 թվականին Ռիոյում տեղի ունեցած երկրագնդի զագաթաժողովից** քսան տարի անց, որտեղ երկրներն ընդունել էին **Ղար 21 օրակարգը** - հայեցակարգ, որ կոչված էր վերանայելու տնտեսական աճի, սոցիալական արդարության և շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման հետ կապված խնդիրները, ՄԱԿ-ը նորից հրավիրում է կառավարություններին, միջազգային հաստատություններին և հիմնական սոցիալական խմբերին¹ միացյալ ջանքերով մշակելու մի շարք արդյունավետ միջոցներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի նվազեցնել աղքատության մակարդակը՝ միաժամանակ նպաստելով արժանավայել աշխատատեղերի ստեղծման, մաքուր էլեկտրաէներգիայի ապահովման, ինչպես նաև բնական ռեսուրսների էլ ավելի կայուն և խելամիտ օգտագործման խնդիրներին:

Ռիո+20-ը մի հնարավորություն է ձեռքբազատվելու խնդիրների լուծման ստանդարտ մոտեցումներից և ձեռնարկելու կոնկրետ քայլեր աղքատության հաղթահարման, շրջակա միջավայրը կործանումից փրկելու և դեպի ապագա տանող ճանապարհ կառուցելու համար:

Կայուն զարգացումը «գործընթաց է, ուր հաշվի են առնվում ներկայիս պահանջները, չգրկելով գալիք սերունդներին իրենց պահանջները բավարարելու հնարավորությունից»:

Բրունդենդի հանձնաժողով (1987թ.)

¹ Ղար 21 օրակարգը սահմանում է իննը հիմնական խմբերի. կանանց, երեխաների և երիտասարդների, տեղաբնիկ ժողովուրդների, աշխատավորների ու արհմիությունների, բիզնեսի և արդյունաբերության, գիտատեխնիկական հանրության և ֆերմերների:

Ինչու՞ է մեզ անհրաժեշտ Ռիո+20-ը

- Աշխարհում այժմ բնակվում է **7 միլիարդ մարդ** - մինչև 2050 թվականը այդ թիվը կհասնի 9 միլիարդի:
- Յուրաքանչյուր հինգ մարդուց մեկը՝ **1,4 միլիարդ մարդ**, ներկայումս ապրում է օրական մոտ **1,25 դոլլար կամ ավելի քիչ գումարով**:
- Մեկ ու կես միլիարդ մարդ ամբողջ աշխարհում չունի էլեկտրաէներգիայի օգտագործման հնարավորություն: Երկուս ու կես միլիարդը չունի զուգարան: Եվ համարյա մեկ միլիարդ մարդ ամեն օր **մատնված է սովի**:
- Ջերմոցային գազի արտանետումների քանակը գնալով ավելանում է, և բոլոր հայտնի կենսատեսակների ավելի քան մեկ երրորդը կարող է ոչնչանալ, եթե, ինչպես և անցյալում, հաշվի չառնվեն **կլիմայական փոփոխությունները**:
- Եթե մենք պետք է մեր երեխաներին և թոռներին թողնենք **կյանքի համար բնակելի մոլորակ**, ապա համատարած աղքատության և շրջակա միջավայրի ոչնչացման հետ կապված խնդիրները պետք է լուծվեն հիմա:
- Մենք կունենանք **շատ ավելի մեծ ծախսեր** ապագայում, ներառյալ աղքատության և անկայունության ավելի մեծ ցուցանիշներ և շատ ավելի վատթար վիճակում հայտնված շրջակա միջավայր, եթե հիմա մեզ չհաջողվի այս վճռական մարտահրավերներին տալ համապատասխան լուծումներ:
- **Ռիո+20-ը** հնարավորություն է տալիս **մտածել գլոբալ մակարդակով**, որպեսզի բոլորս միասին կարողանանք գործել տեղական մակարդակում՝ կառուցելով մեր ընդհանուր ապագան:

«Կայուն զարգացումը այլընտրանք չունի: Այն միակ ուղին է, որը թույլ կտա ամբողջ մարդկությանը ապրել արժանավայել կյանքով այս եզակի մոլորակի վրա: Ռիո+20-ը հնարավորություն է տալիս մեր սերնդին ընտրել այս ուղին.»

*Ռիո+20 համաժողովի գլխավոր քարտուղար՝
Շա Ջուկանգ*

Ի՞նչ խնդիրների է անդրադարձնալու Ռիո+20-ը

Կայուն զարգացման հետ կապված մի շարք խնդիրների լուծումներն, այդ թվում կապված քաղաքների, էներգետիկայի, ջրամատակարարման, սննդամթերքի և էկոհամակարգերի հետ՝ արդեն հայտնի են:

Ռիո+20 համաժողովին մասնակից երկրները կփնտրեն այդ լուծումների կյանքի կոչման ուղիները՝ մասնավորապես.

- Կատարելով անցում դեպի ավելի «կանաչ» տնտեսություն՝ ուշադրության կենտրոնում պահելով **աղքատության վերացման** խնդիրը:
- Պաշտպանելով մեր **օվկիանոսները**՝ մեծածավալ ձկնորսության, ծովային էկոհամակարգերի քայքայման և կլիմայական փոփոխությունների անբարենպաստ հետևանքների դեմ պայքարի միջոցով:
- Բարելավելով կյանքի պայմանները մեր **քաղաքներում** և բարձրացնելով վերջիններիս ենթակառուցվածքների արդյունավետությունը:
- Ընդլայնելով վերականգնվող **էներգիայի** աղբյուրների օգտագործումը, ինչը կարող է ակնհայտորեն նվազեցնել ածխածնային գազի արտանետումները և մթնոլորտային օդի աղտոտվածության աստիճանը ինչպես փակ, այնպես էլ բաց տարածքներում և, միաժամանակ, խթանել տնտեսական աճը:
- Բարելավելով **անտառային տնտեսության կառավարումը**, ինչն իր հերթին մեծ օգուտ կբերի: Օրինակ, մինչև 2030թ. **անապատացման** կիսով չափով նվազեցումը թույլ կտա խուսափել ջերմոցային գազերի արտանետումների հետևանքով կլիմայի փոփոխության վրա ազդող 3,7 միլիարդ ԱՄՆ դոլլարի հասնող վնասից և, սա դեռ չհաշված աշխատատեղերի ստեղծումից, եկամուտների աճից, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանումից, մաքուր ջրի աղբյուրներից և անտառային բուսականությունից ստացված բուժիչ դեղամիջոցների բերած օգուտը:
- Բարելավելով **ջրային** ռեսուրսների օգտագործման և պահպանման եղանակները, որպեսզի նպաստենք դրանց զարգացմանը և պայքարենք անապատացման դեմ:

«Կայուն զարգացման օրակարգը համարվում է 21-րդ դարի տնտեսական աճի օրակարգ»

*ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար՝
Բան Կի-մուն*

Գործո՞ւմ է արդյոք կայուն զարգացումը

Վերջին երկու տասնամյակների ընթացքում եղել են կայուն զարգացման հաջող իրագործման բազում օրինակներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, գյուղատնտեսությունը, քաղաքային հատակագծման, արտադրության և սպառման ոլորտները:

- Քենիայում նորարարական ֆինանսական մեխանիզմները խթան հանդիսացան **վերականգնվող էներգիայի** աղբյուրների կիրառման բնագավառում նոր ներդրումների ներգրավման համար, ներառյալ արևի, քամու և հիդրո էներգիան, ինչպես նաև բիոգազի և կենցաղային թափոնների վերամշակումից ստացվող էներգիան, ինչն իր հերթին բերեց եկամուտների և զբաղվածության մակարդակի աճի:
- Չինաստանում **ածխածնի երկօքսիդի ցածր արտանետումներով տնտեսական զարգացման** ռազմավարության անցմանն ուղղված քայլերը, հիմնված վերականգնվող էներգիայի աղբյուրների լայն կիրառման վրա, բերեցին աշխատատեղերի և եկամտի նոր աղբյուրների ստեղծմանը՝ **ածխածնի երկօքսիդի ցածր արտանետումներով** հեռանկարային արդյունաբերական մասնաճյուղերի զարգացման համար:
- Ուգանդայում անցումը դեպի **օրգանական գյուղատնտեսություն** ավելացրել է մանր սեփականատեր-ֆերմերների եկամուտն ու հասույթը, ինչն էլ շահավետ է եղել ինչպես տնտեսության, այնպես էլ հասարակության և շրջակա միջավայրի համար:
- Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում «Էկոլոգիապես մաքուր զարգացման մեխանիզմի» շրջանակներում իրականացվել է մի ծրագիր, որի արդյունքում վերափոխվել են քաղաքի երկու ամենամեծ աղբանոցները էկոլոգիապես մաքուր աղբավայրերի: 2004 թվականից մինչև 2011 թվականի սեպտեմբեր ամիսը ձեռնարկված միջոցառումների շնորհիվ մթնոլորտ չի արտանետվել շուրջ 352,000 տոննա մեթան՝ փոխարենը այն օգտագործվել է շուրջ մեկ միլիոն մեգավատտ էլեկտրաէներգիա արտադրելու համար:
- Նեպալում իրականացվող **համայնքային անտառամշակումը**, որը վերահսկվում է անտառային ռեսուրսներից օգտվող տեղական խմբերի կողմից, նպաստել է անտառային ռեսուրսների վերականգնմանը՝ 1990-ական թվականներին գրանցված կայուն անկումից հետո:
- Կանադայում ԷկոԼոգո սերտիֆիկացման նշանի կիրառումը, որը համարվում է Հյուսիսային Ամերիկայում մեծ վստահություն վայելող բնապահպանական լոգոներից մեկը, նպաստել է բնապահպանական խստապահանջ ստանդարտներին համապատասխանող հազարավոր ապրանքատեսակների մասսայականացմանը (վաճառքի խթանմանը):
- Ֆրանսիայում 2006-2008 թվականներին շուրջ **90,000 աշխատատեղ** ստեղծվեց կանաչապատման ոլորտում՝ գլխավորապես էներգիայի պահպանման և վերականգնվող էներգիայի զարգացման ոլորտներում:
- Հայիթիում ակնկալվում է, որ «Հարավային ափ» նախաձեռնության արդյունքում շուրջ 205,000 մարդ կապահովվի աշխատանքով Մեծ Լոնդոնի տարածքի մոտ կեսն ունեցող սաստիկ **դեգրադացված հողատարածքների** կայուն մշակման շնորհիվ:

Ի՞նչ է տեղի ունենալու «Ռիո +20» համաժողովում

2012թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին կառավարություններ, մասնավոր սեկտոր, ՀԿ-ներ և այլ շահագրգիռ կազմակերպություններ ներկայացնող **հազարավոր մասնակիցներ** հավաքվելու են Ռիոյում, վճռական խթան տալու կայուն զարգացման գործընթացին:

Համաժողովի նախապատրաստական կոմիտեի վերջին նիստը և համաժողովը տեղի կունենան 2012թ. հունիսին:

Պաշտոնական միջոցառումներին զուգահեռ, ինչպես նաև նիստերի միջև ընկած ժամանակահատվածներում մասնակիցների կողմից կկազմակերպվեն բազմաթիվ ոչ պաշտոնական միջոցառումներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ, տոնավաճառներ և կարվեն հայտարարություններ:

Պաշտոնական քննարկումները կծավալվեն **երկու հիմնական թեմաների** շուրջ. դրանք են՝ Ինչպես ստեղծել «կանաչ» տնտեսություն կայուն զարգացման հասնելու և մարդկանց աղքատության ճիրաններից ազատելու համար, ինչպես նաև՝ աջակցել զարգացող երկրներին տալով նրանց հնարավորություն գտնելու դեպի զարգացում տանող կանաչ ուղին, և ինչպես բարելավել կայուն զարգացմանն ուղղված միջազգային ջանքերի համակարգումը:

Ակնկալվում է, որ կառավարությունները կձեռնարկեն պարզ և նպատակաուղղված քայլեր կայուն զարգացումը կյանքի կոչելու համար՝ հիմնվելով հաջողությամբ պսակված բազմաթիվ օրինակների վրա, որոնց ականատեսն ենք եղել վերջին 20 տարիների ընթացքում:

«Աշխարհում կայուն խաղաղությունը պետք է կառուցվի կայուն զարգացման վրա: Դրա համար են ասել, որ կայուն զարգացման օրակարգը հենց Դար 21-ի օրակարգն է:»

*ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար՝
Բան Կի-մուն*

Կոնտակտային տվյալներ.

Ռիո +20-ի քարտուղարություն.

uncsd2012@un.org

Մամուլի հարցերի համար.

ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչություն.

mediainfo@un.org

www.uncsd2012.org

www.un.org/sustainablefuture